

Ինեկո օնլայն/մոբայլ համակարգում այլ բանկի վճարային քարտի կցման պայմաններ և սակագներ

1. Ինեկո օնլայն/մոբայլ համակարգում հնարավոր է կցել ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող բանկերի կողմից թողարկված ArCa, Master, Visa տեսակի ցանկացած վճարային քարտ:
2. **Կցված քարտի միջոցով հնարավոր է կատարել հետևյալ գործարքները¹**
 - **փոխանցում իր հաշիվներին**՝ Կցված քարտից հնարավոր է կատարել փոխանցում Ինեկոբանկում սեփական դրամային հաշիվներին
 - **փոխանցում քարտին**՝ Կցված քարտից հնարավոր է կատարել փոխանցում Ինեկոբանկի կողմից թողարկված, ինչպես նաև ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող այլ բանկերի կողմից թողարկված վճարային քարտերին
 - **Ներբանկային փոխանցում**՝ Կցված քարտից հնարավոր է կատարել ՀՀ դրամով փոխանցում Ինեկոբանկի այլ հաճախորդների դրամային հաշիվներին
 - **ԻնեկոՇնկեր փոխանցում**՝ Կցված քարտից հնարավոր է կատարել ՀՀ դրամով փոխանցում Ինեկոբանկի այլ հաճախորդների նրա բջջային հեռախոսը կամ Էլ. փոստի հասցեն մուտքագրելու միջոցով
 - **ԻնեկոՓեյ փոխանցում**՝ Կցված քարտից հնարավոր է կատարել ՀՀ դրամով փոխանցում Ինեկոբանկի այլ հաճախորդների՝ QR կոդի սքանավորման միջոցով
 - **ԻնեկոՓեյ վճարում**՝ Կցված քարտից հնարավոր է կատարել անկանխիկ վճարում՝ QR կոդի սքանավորման միջոցով
 - **Պարբերական վճարումներ**՝ Հանձնարարել Բանկին կատարել պարբերական փոխանցումներ/վճարումներ կցված քարտից

¹Նշված գործարքների հասանելիությունը կախված է հաճախորդի հաշվի պայմաններով սահմանված հնարավորություններից:

3. Կցված քարտի միջոցով կատարված գործարքների համար կիրառվում են հետևյալ սակագները

Գործառնության տեսակ	Սակագին²
Քարտի կցում	Անվճար ³
Կցված քարտի հեռացում	Անվճար
Ինտեկոֆեյ վճարում	Անվճար
Պարբերական վճարումներ	Անվճար ⁴
Փոխանցում քարտին ⁵	1%
Փոխանցում իր հաշիվներին ⁶	0.5%
Ներբանկային փոխանցում ⁶	
ԻնտեկոՇնկեր փոխանցում	
ԻնտեկոՓեյ փոխանցում	

4. Արտարժույթային վճարային քարտով փոխանցում/վճարում կատարելու դեպքում գործարքը տեղի է ունենում ՀՀ դրամով, իսկ փոխարկման փոխարժեքը սահմանվում է համաձայն կցված քարտը թողարկող բանկի համապատասխան պայմանների և սակագների:

5. Հաճախորդը միաժամանակ կարող է կցած ունենալ առավելագույնը 5 վճարային քարտ:

² Անկախ սույն սակագներով սահմանված վճարներից կցվող քարտի թողարկող բանկի կողմից կարող են գանձվել վճարներ՝ համաձայն տվյալ քարտի պայմանների և սակագների:

³ Քարտ կցելիս տվյալ քարտից կգանձվի 5 ՀՀ դրամ, որը կփոխանցվի հաճախորդի ընթացիկ հաշվին:

⁴ Պարբերական վճարման հանձնարարականով նախատեսված գործառնության համար կգանձվի համապատասխան վճար՝ սույն սակագներով նախատեսված լինելու դեպքում:

⁵ Փոխանցում ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող այլ բանկերի կողմից թողարկված վճարային քարտերին *Փոխանցում քարտին* ծառայության միջոցով: *Փոխանցում քարտին* ծառայության այլ պայմանները կարգավորվում են համաձայն «Ինտեկո Օնլայն/Մոբայլ համակարգում փոխանցում քարտին ծառայության պայմաններ և սակագներ» փաստաթղթի:

⁶ Այդ թվում *Փոխանցում քարտին* ծառայության միջոցով Ինտեկոբանկի կողմից թողարկված վճարային քարտերին կատարված փոխանցումներ: